



ԱՐՅԱՆԻ
ՆԱԽԱԳԹԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ



ԱՐՅԱՆԻ ԵՐԻՏԱՎԱՐԳ
ԳԻՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԳԵՏՆԵՐԻ
ՄԻՋՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՄ)



ԵՐԵՎԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱՐԱՐԱՐԱՆ



«ԱՐՅԱՆ»
ԳԻՏԱՆԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ



ԳԻՏԱԿԱՆ ԱՐՅԱՆ



SCIENTIFIC
ARTSAKH

НАУЧНЫЙ
АРЦАХ

№ 1(4), 2020

Հիմնադիր – Founder – Учредитель:
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԵՊՀ)
YEREVAN STATE UNIVERSITY (YSU)
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ (ЕГУ)
www.yసు.am

Հրատարակիչ – Publisher - Издатель:
ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՍ)
UNION OF YOUNG SCIENTISTS AND SPECIALISTS OF ARTSAKH (UYSSA)
ОБЪЕДИНЕНИЕ МОЛОДЫХ УЧЁНЫХ И СПЕЦИАЛИСТОВ АРЦАХА (ОМУСА)
www.aegmm.org

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ
SCIENTIFIC ARTSAKH
НАУЧНЫЙ АРЦАХ

№ 1(4), 2020

«Գիտական Արցախ» պարբերականն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

The «Scientific Artsakh» journal is included in the list of scientific periodicals acceptable for publication of the main results and provisions of doctoral and candidate theses established by the Higher Attestation Committee of the Republic of Armenia (HAC RA).

Журнал «Научный Арцах» включен в список научных периодических изданий, приемлемых для публикации основных результатов и положений докторских и кандидатских диссертаций, установленных Высшим аттестационным комитетом Республики Армения (ВАК РА).

«ԱՐՑԱԽ» հրատ. – Publ. «ARTSAKH» – Изд. «АРЦАХ»
ԵՐԵՎԱՆ – YEREVAN – ЕРЕВАН
2020

Տպագրվում է Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Համարը հրատարակության է երաշխավորել «Գիտական Արցախ» պարբերականի խմբագրական խորհուրդը

Լվիրվում է Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորման հիմնադրման 5-ամյակին

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Լախագահ՝ Արամ ՍԻՄՈՆՅԱՆ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գլխավոր խմբագիր՝ Ավետիք ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Թեմիմա ՄԱՐՈՒԹՅԱՆ, բանասիրական գիտությունների թեկնածու,
դոցենտ

Անդամներ՝

Արծրուն ԱՎԱԳՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հրանտ ԱՎԱՆԵՍՅԱՆ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Դավիթ ԲԱԲԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
Վահրամ ԲԱԼԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Խաչիկ ԳԱԼՍՏՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, դոցենտ
Զուլիետա ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վլադիսլավ ԳՐՈՒԶԴԵՎ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Կոստրոմա, ՌԴ)
Գևորգ ԴԱՆԻԵԼՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Արման ԵՂՎԱԶԱՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
Մարեկ ԺԵՅՄՈ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Օլշտին, Լեհաստան)
Վալենտինա ԼԱՊԱԵՎԱ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Մոսկվա, ՌԴ)
Ստտո ԼՈՒԻՏԵՐՅԱԼԴՏ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Համբուրգ, Գերմանիա)
Ռուզաննա ՀԱԿՈՒՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ
Նազիկ ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մուշեղ ՀՈՎԱԵՓՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Գագիկ ՂԱԶԻՆՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Աշոտ ՄԱՐԿՈՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Էդիկ ՄԻՆԱՍՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Կարեն ՆԵՐՍԻՍՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Հայկ ՍԱՐԳՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Յուրի ՍՈՒՎԱՐՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Մաքսիմ ՎԱՍԿՈՎ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Դոնի Ռոստով, ՌԴ)
Գարիկ ԶԵՌՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Տիգրան ԶՈՂԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գիտական Արցախ, № 1(4), 2020, Երևան, «ԱՐՑԱԽ» հրատ., 2020, 244 էջ:

«Գիտական Արցախ» պարբերականի 2020թ. 1-ին (4-րդ) համարում տեղ են գտել հասարակական գիտությունների արդի հիմնախնդիրների վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունը, Արցախի Հանրապետությունը, Գերմանիան, Լեհաստանը և Ուկրաինան ներկայացնող մոտ երեք տասնյակ անվանի ու երիտասարդ գիտնականների աշխատանքները:

Գիտական պարբերականում զետեղված են նաև Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորման ու Երևանի պետական համալսարանի կողմից 2019թ. սեպտեմբերի 12-15-ը Ստեփանակերտում համատեղ կազմակերպված «Հայոց պետականության անցյալը, ներկան ու ապագան» միջազգային երիտասարդական 4-րդ գիտաժողովի լավագույն գիտական հոդվածները:

***Dedicated to the 5th Anniversary
of Union of Young Scientists and Specialists of Artsakh***

EDITORIAL COUNCIL

Chairman: Aram SIMONYAN, Director of Institute for Armenian Studies of YSU, NAS RA Associate Member, Doctor of History, Professor

Editor-in-Chief: Avetik HARUTYUNYAN, Ph.D in Law, Associate Professor

Deputy Editor-in-Chief: Tehmina MARUTYAN, Ph.D in Philology, Associate Professor

Members:

Artsrun AVAGYAN, Doctor of Philology, Professor

Hrant AVANESYAN, Doctor of Psychology, Professor

David BABAYAN, Doctor of History, Associate Professor

Vahram BALAYAN, Doctor of History, Professor

Gevorg DANIELYAN, Doctor of Law, Professor

Khachik GALSTYAN, Doctor of Political Sciences, Associate Professor

Gagik GHAZINYAN, Academician of NAS RA, Doctor of Law, Professor

Vladislav GRUZDEV, Doctor of Law, Professor (Kostroma, Russia)

Julieta GYULAMIRYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor

Ruzanna HAKOBYAN, Doctor of Law, Associate Professor

Nazik HARUTYUNYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor

Mushegh HOVSEPYAN, Doctor of Philology, Professor

Garik KERYAN, Doctor of Political Sciences, Professor

Tigran KOCHARYAN, Doctor of Political Sciences, Professor

Valentina LAPAEVA, Doctor of Law, Professor (Moscow, Russia)

Otto LUCHTERHANDT, Doctor of Law, Professor (Hamburg, Germany)

Ashot MARKOSYAN, Doctor of Economic Sciences, Professor

Edik MINASYAN, Doctor of History, Professor

Karen NERSISYAN, Ph.D in Economic Sciences, Associate Professor

Hayk SARGSYAN, Doctor of Economic Sciences, Professor

Yuri SUVARYAN, Academician of NAS RA, Doctor of Economic Sciences, Professor

Maksim VASKOV, Doctor of Sociology, Professor (Rostov-on-Don, Russia)

Arman YEGHIAZARYAN, Doctor of History, Associate Professor

Marek ZEJMO, Doctor of Political Sciences, Professor (Olsztyn, Poland)

Scientific Artsakh, № 1(4), 2020, Yerevan, Publ. «ARTSAKH», 2020, 244 pages.

The first (4) issue of «Scientific Artsakh» journal 2020 comprises the scientific works of approximately 30 prominent and young scientists from Armenia, Artsakh, Germany, Poland and Ukraine on the topical issues of social sciences.

The publication also contains the best scientific articles of the 4th international youth scientific conference «The past, present and future of the Armenian statehood», jointly organized by the Union of Young Scientists and Specialists of Artsakh and Yerevan State University on September 12-15, 2019 in Stepanakert.

***Посвящается 5-летию основания
Объединения молодых учёных и специалистов Арцаха***

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Председатель: Арам СИМОНЯН, директор Института арменоведческих исследований ЕГУ,
член-корреспондент НАН Республики Армения, доктор исторических наук, профессор

Главный редактор: Аветик АРУТЮНЯН, кандидат юридических наук, доцент

Заместитель главного редактора: Теймина МАРУТЯН, кандидат филологических наук, доцент

Члены:

Арцрун АВАГЯН, доктор филологических наук, профессор
Грант АВАНЕСЯН, доктор психологических наук, профессор
Рузанна АКОПЯН, доктор юридических наук, доцент
Назик АРУТЮНЯН, доктор педагогических наук, профессор
Давид БАБАЯН, доктор исторических наук, доцент
Ваграм БАЛАЯН, доктор исторических наук, профессор
Максим ВАСЬКОВ, доктор социологических наук, профессор (Ростов-на-Дону, Россия)
Хачик ГАЛСТЯН, доктор политических наук, доцент
Владислав ГРУЗДЕВ, доктор юридических наук, профессор (Кострома, Россия)
Джувлетта ГЮЛАМИРЯН, доктор педагогических наук, профессор
Геворг ДАНИЕЛЯН, доктор юридических наук, профессор
Арман ЕГИАЗАРЯН, доктор исторических наук, доцент
Марек ЖЕЙМО, доктор политических наук, профессор (Ольштын, Польша)
Гагик КАЗИНЯН, академик НАН РА, доктор юридических наук, профессор
Гарик КЕРЯН, доктор политических наук, профессор
Тигран КОЧАРЯН, доктор политических наук, профессор
Валентина ЛАПАЕВА, доктор юридических наук, профессор (Москва, Россия)
Отто ЛЮХТЕРХАНДТ, доктор юридических наук, профессор (Гамбург, Германия)
Ашот МАРКОСЯН, доктор экономических наук, профессор
Эдик МИНАСЯН, доктор исторических наук, профессор
Карен НЕРСИСЯН, кандидат экономических наук, доцент
Мушег ОВСЕПЯН, доктор филологических наук, профессор
Гайк САРГСЯН, доктор экономических наук, профессор
Юрий СУВАРЯН, академик НАН РА, доктор экономических наук, профессор

Научный Арцах, № 1(4), 2020, Ереван, Изд. «АРЦАХ», 2020, 244 страниц.

В первом (4) номере 2020 г. журнала «Научный Арцах» нашли место научные работы около 30 выдающихся и молодых ученых из Армении, Арцаха, Германии, Польши и Украины, исследующие актуальные вопросы общественных наук.

В издании размещены также лучшие научные статьи 4-ой международной молодежной научной конференции «Прошлое, настоящее и будущее армянской государственности», совместно организованной Объединением молодых учёных и специалистов Арцаха и Ереванским государственным университетом 12-15 сентября 2019 года в Степанакерте.

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, HISTORY, ИСТОРИЯ

Անի Խաչատրյան. Հայրենիք-Սփյուռք մշակութային փոխանցություններն արվեստի բնագավառում 1980-ական թվականներին.....61

Ani Khachatryan. Diaspora-Homeland Cultural Relations in the Field of Art in the 1980s

Ани Хачатрян. Культурное взаимодействие родины и диаспоры в 1980-х гг. в области искусства

Գայանե Հովհաննիսյան. Ելիզավետպոլի նահանգը Անդրկովկասի վարչատարածքային բաժանումներում (1917 թ. փետրվար - 1918 թ. հունվար).....74

Gayane Hovhannisyan. Elizavetpol Governorate in the Transcaucasian Administrative Division (February 1917-January 1918)

Гаяне Оганнисян. Елизаветпольская губерния в Закавказском административном делении (февраль 1917 г. - январь 1918 г.)

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ECONOMICS, ЭКОНОМИКА

Արման Ասրյան. Բազմաբնակարան շենքերի հիմնանորոգման ու արդիականացման աշխատանքների ֆինանսավորման մեխանիզմները ՀՀ-ում.....83

Arman Asryan. Mechanisms of Financing the Renovation and Modernization Works of Multi-Apartment Buildings in the RA

Арман Асрян. Финансирование ремонта и модернизации многоквартирных домов в РА

Ժաննա Բազիյան. Գիտելիքների տրանսֆերի ֆենոմենը տեխնոպարկում գիտության, կրթության և բիզնեսի ինտեգրացիայի զարգացման համատեքստում.....94

Zhanna Baziyan. The Phenomenon of Knowledge Transfer within the Context of Development of Science, Education and Business Integration in the Technopark

Жанна Базиян. Феномен трансфера знаний в контексте развития интеграции науки, образования и бизнеса в технопарке

Հովիկ Գրիգորյան. ՀՀ ազգային նորարարական համակարգի կատարելագործման հնարավորությունները որպես երկարաժամկետ տնտեսական աճի ապահովման աղբյուր.....104

Hovik Grigoryan. Opportunities for Improving the RA National Innovation System as a Source of Long-Term Economic Growth

Овик Григорян. Возможности совершенствования инновационной системы РА как источник обеспечения долгосрочного экономического роста

Հրանտ Հայրապետյան. Գյուղատնտեսական մշակաբույսերի աճեցման ռիսկայնության նվազեցման ֆինանսական խնդիրները ՀՀ-ում.....112

Hrant Hayrapetyan. Financial Problems of Reducing Risk of Agricultural Plants in Armenia

Грант Айрапетян. Финансовые проблемы снижения риска выращивания сельскохозяйственных растений в Армении

Աշոտ Մարկոսյան, Էլյանորա Մաթևոսյան. Հայաստանի Հանրապետության տնտեսության (ՀՆԱ-ի) կառուցվածքային փոփոխությունները և դրանց միտումները.....125

Ashot Markosyan, Elyanora Matevosyan. Structural Changes in the Economy (GDP) of the Republic of Armenia and Trends of Changes

Ашот Маркосян, Элянора Матевосян. Структурные изменения в экономике (ВВП) Республики Армения и их тенденции

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՂԲՅՈՒՐ*

ՀՈՎԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

*Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի
«Ֆինանսներ» ամբիոնի դասախոս,
տնտեսագիտական գիտությունների թեկնածու, դոցենտ,
թ. Երևան, Հայաստանի Հանրապետություն
hoviq@mail.ru*

Հոդվածի նպատակն է առաջ քաշել և հիմնավորել այն մոտեցումը, ըստ որի՝ ՀՀ ազգային նորարարական համակարգը լայն հնարավորություններ է ընձեռնում պետությանը տնտեսական աճի ապահովման համատեքստում, և Հայաստանի Հանրապետությունը, ունենալով մտավոր մեծ ռեսուրսներ, հնարավորինս արդյունավետ կարող է դրանք օգտագործել նորարարական տեխնոլոգիաների ստեղծման ու կիրառման մեջ:

Հետապոտության իրականացման ընթացքում կիրառվել են ինչպես համագիտական (անալիզ, սինթեզ), այնպես էլ հատուկ (ձևական-տրամաբանական, համեմատական-իրավական) մեթոդներ:

Հետապոտության արդյունքում հանգել ենք երկակացության, որ Հայաստանի Հանրապետությունը երկարաժամկետ տնտեսական աճի ապահովման գործում պետք է առաջնահերթ հենվի հենց գիտելիքի վրա, քանի որ գիտելիքն է գերարժեքի գերարտադրողականության աղբյուրը, որի արդյունքում մեր հանրապետության անցումը գիտելիքահենք հասարակության ենթադրում է քաղաքական, տնտեսական ու կրթական ոլորտի արմատական վերափոխում:

Հիմնաբառեր՝ տնտեսություն, տնտեսական աճ, գիտելիք, ազգային նորարարական համակարգ, ինովացիաներ, ՀՆԱ, պետական բյուջե:

Ներկայումս երկարաժամկետ տնտեսական ապահովման գործում կարևորվում է գիտելիքի գործոնը: Գիտելիքը գերարժեքի և գերարտադրողականության աղբյուր է, հետևաբար կարևորվում է այն հանգամանքը, թե ներկայումս ինչպիսին է Հայաստանի պատրաստվածության աստիճանը՝ տնտեսական երկարատև զարգացման խնդիրները լուծելու և գիտելիքի հեղափոխության առաջացրած մարտահրավերներին պատասխանելու համար²¹³:

Գիտելիքահենք տնտեսության անցումը ենթադրում է ազգային նորարարական համակարգի ստեղծում, իսկ Հայաստանի տնտեսության անցումը նոր որակական վիճակի՝ ինովացիոն գործունեության ակտիվացում, ինչն իր հերթին պահանջում է հիմնարար փոփոխություններ հասարակական արտադրության, կրթության և աշխատուժի կազմի կառուցվածքում: ՀՀ ինովացիոն համակարգի ձևավորման հիմնադրույթներին ցուցում է:

* Հոդվածը ներկայացվել է 04.02.2020թ., գրախոսվել՝ 30.03.2020թ., տպագրության ընդունվել՝ 10.04.2020թ.:

²¹³ Վարդանյան Գ. Ի., Գիտելիքահենք տնտեսություն հնարավորություններ և մարտահրավերներ, Ե., 2008, էջ 178:

- Մարդկային կապիտալը կենտրոնական դեր ունի գիտելիքահեռք տնտեսության կառուցման գործում,
- Հայաստանի համար առավել իրատեսական դիրքավորումը զլորբալ տեխնոլոգիական ընկերությունների հետազոտությունների և մշակումների կենտրոն դառնալն է:

Մեր հանրապետությունում անցումը գիտելիքահեռք հասարակության ենթադրում է քաղաքական, տնտեսական և կրթական ոլորտի արմատական վերափոխում՝ կազմակերպություններից սկսած: Գիտելիքահեռք տնտեսության ձևավորման առաջնահերթ նախապայմանը գիտելիքի հասարակության ու դրան միտված գաղափարախոսության ձևավորումն է:

Գիտատեխնիկական գործունեության արդյունքների գնահատման կարևոր ցուցանիշ է գրանցված արտոնագրերի քանակը: 2017 թվականին մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել 110 գյուտի և 40 օգտակար մոդելի հայտ, որից 146-ը՝ ազգային հայտատուներից, 4-ը՝ օտարերկրյա հայտատուներից, իսկ 2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ստացված գյուտերի և օգտակար մոդելների հայտերի ընդհանուր քանակը 1992 թվականից սկսած կազմել է 4478²¹⁴:

Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ համակարգիչները, էլեկտրոնիկան և հեռահաղորդակցման պարագաները կազմում են Հայաստան ներմուծվող բարձր տեխնոլոգիական ապրանքների 70-80 տոկոսը, մինչդեռ բարձր տեխնոլոգիական մեքենասարքավորումների բաժինը շատ քիչ է՝ մոտ 2 տոկոս:

Հայաստանի Հանրապետությունում գիտությունը կարևորվում է որպես երկրի անվտանգության ապահովման, կրթության, տնտեսության, մշակույթի և հասարակության առաջընթացի զարգացման բացառիկ գործոն: Գիտության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակներն են՝ հանրապետության գիտական ու գիտատեխնիկական ներուժի զարգացումը, գիտության և տեխնիկայի վիճակների՝ տնտեսության մեջ ներդրման խրախուսումը, գիտության, կրթության և արտադրության ինտեգրումը, միջազգային գիտատեխնիկական համակարգին ինտեգրումը, գիտության ժամանակակից և տեղեկատվական ապահովման համակարգի ձևավորումը, հայազգիության զարգացմանը նպաստելը:

Վերջին տարիներին էականորեն ընդլայնվել են գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառում միջազգային համագործակցության շրջանակները:

Ավաճի վառ ապացույցը ՀՀ-ում փայլուն գործունեություն ծավալող «ՍԻՆՈՓՍԻՍ» - «ՄԱՅԶԸՐՈՍՈՖԹ» վերազգային կորպորացիաներն են:

Սինոփսիս ընկերությունը համաշխարհային էլեկտրոնային շուկան համալրում է ծրագրային ապահովման, համակարգերի, կիսահաղորդչային մտավոր սեփականության (ՄՍ) և ծառայությունների նորարարություններով՝ ի պատասխան նախագծման, ստուգման և արտադրության ոլորտում առկա լուրջ մարտահրավերների: Սինոփսիսի՝ իրագործման, ստուգման, մտավոր սեփականության, արտադրության և ծրագրավորվող մատրիցային բյուրեղների (FPGA) լուծումների բազմակողմանի և ինտեգրացված համալիրն ուղղված է նախագծողներին ու արտադրողներին այսօր հանդիպող այնպիսի կարևոր խնդիրների լուծմանը, ինչպիսիք են՝ հոսանքի սպառման և արտադրողականության ղեկավարումը, ինչպես նաև արտադրանքի շուկա դուրս բերման ժամկետը: Սինոփսիսը Հայաստանում իր գործունեությունը սկսել է 2004թ.-ին՝ տեղեկատվական տեխնոլոգիաները (SS) երկրի զարգացման գերակա ուղղություն ճանաչելուց հետո: Այդ շրջանից «Սինոփսիս Արմենիա» ՓԲԸ-ն դարձել է «Սինոփսիս» ընկերության կարևորագույն մասնաճյուղերից մեկը: Ներկայումս ընկերությունում աշխատում են հարյուրավոր որակյալ ճարտարագետներ, և այն հանդիսանում է մեր

²¹⁴ https://www.aipa.am/u_files/file/AnnualRep/Rep_h_%202017.pdf

երկրում SS ոլորտի խոշորագույն գործատուներից մեկը: Հայաստանը SS ոլորտի՝ բարձր որակավորում ունեցող մասնագետներով ապահովելու նպատակով ընկերությունը ներդրումներ է կատարում SS բնագավառի կրթության ոլորտում և առաջատար ու հաջողված համագործակցության ծրագրեր է իրականացնում հանրապետության մի շարք առաջատար բուհերի՝ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի (ՀԱՊՀ), Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ), Ռուս-հայկական (Սլավոնական) պետական համալսարանի (ՌՍՀ) և Մոսկվայի Էլեկտրոնային տեխնիկայի ինստիտուտի (ՄԵՏԻ) հետ²¹⁵:

Ինչ վերաբերում է Մայքրոսոֆթին, ապա պետք է նշել, որ ընկերության հայաստանյան գրասենյակը հիմնադրվել է 2006 թվականին: Ընկերության գործունեության հիմնական ուղղություններից են՝ համագործակցությունը ՀՀ Կառավարության հետ՝ կրթության, առողջապահության, սոցիալական, էլ. կառավարման, մտավոր սեփականության պահպանման և այլ բնագավառներում, տեղական SS արդյունաբերությանը արդի տեխնոլոգիաների և հմտությունների փոխանցման միջոցով աջակցության ցուցաբերումը, գործընկերների Էկոհամակարգի ստեղծումը, աջակցությունը տեղական մասնավոր և հասարակական ընկերություններին՝ Հայաստանում SS ենթակառուցվածքի զարգացման գործում, Նոր կատարելագործված բիզնես լուծումների մշակումը, վերապատրաստումն ու սերտիֆիկացումը:²¹⁶

Օտարերկրյա պետությունների կամ միջազգային կազմակերպությունների հետ իրականացվող ծրագրերը նպաստում են հանրապետության գիտնականների ինտեգրմանը միջազգային գիտական ու գիտակրթական տարածք և ստեղծում բարենպաստ պայմաններ դրամաշնորհային ծրագրերին մասնակցելու համար, ինչի արդյունքում զգալիորեն ավելանում են միջազգային կազմակերպությունների կողմից հանրապետություն ուղղված ֆինանսական միջոցները:

Գիտության ոլորտում միասնական բաղաբանականության մշակման և արդյունավետ իրականացման գործում առաջնային լուծում պահանջող հիմնական խնդիրներն են՝

- Գիտության կառավարման արդյունավետ համակարգի ձևավորման նպատակով գիտության ոլորտի պետական կառավարման միասնական մարմնին համապատասխան լիազորությունների տրամադրման հարցը,

- Գիտության ոլորտում ենթակառուցվածքների, նյութատեխնիկական բազայի արդիականացումը,

- Գիտական ներուժի նպատակային վերարտադրության ապահովումը, գիտության ֆինանսավորման արդյունավետության բարձրացման, ծրագրային ֆինանսավորման ձևերի հստակեցման, ծրագրերի ընտրությունն իրապես մրցույթով ապահովելը,

- Գիտական հետազոտությունների և մշակումների ֆինանսավորման մեջ տնտեսության մասնավոր հատվածի մասնակցության ավելացման ապահովումը,

- Գիտական արդյունքի ապրանքայնացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը, գիտատեխնիկական գործունեության ասպարեզում միջազգային համագործակցության ընդլայնումը:

Գիտության ոլորտում իրականացվող բարեփոխումների հիմնական նպատակը գիտելիքի վրա հիմնված տնտեսության և հասարակության ստեղծումն է: Այդ գործընթացում վճռորոշ դերակատարություն պետք է ունենա պետությունը:

Բարեփոխումները պետք է ընթանան մի կողմից՝ գիտական համակարգի կառավարման արդյունավետության բարձրացման, գիտության ոլորտի

²¹⁵ <http://itguide.eif.am/index.php?id=77&lang=1#top>

²¹⁶ <https://www.microsoft.com/hy-am/about>

ենթակառուցվածքների և նյութատեխնիկական բազայի արդիականացման ու կատարելագործման, մյուս կողմից՝ գիտական կազմակերպությունների աշխատանքների նորովի կազմակերպման, գիտական կադրերի նպատակային պատրաստման և տեղաբաշխման, նրանց աշխատանքների արդյունավետության բարձրացման ուղղություններով:

ՀՀ գիտության ոլորտի զարգացման ռազմավարությունը ենթադրում է պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեությանը հատկացվող ֆինանսական ծավալների ավելացում. 2017-2018 թվականներին գիտության բյուջեն կազմել է 11.433.1 մլն. դրամ՝ ՀՆԱ-ի 0.25%-ը:

Գիտությանը հատկացվող ֆինանսական ծավալների ավելացման անհրաժեշտությունը պայմանավորված է ինչպես ժամանակակից տնտեսության և հասարակության զարգացման գործում գիտության առանցքային դերով, այնպես էլ ՀՀ-ում գիտելիքահենք տնտեսություն ստեղծելու և դրա առաջանցիկ զարգացման համար անհրաժեշտ բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստման անհրաժեշտությամբ: Բացի այդ, գիտության ոլորտի ֆինանսավորման ավելացումը (ինչպես պետական բյուջեից, այնպես էլ տնտեսության մասնավոր հատվածից) զգալիորեն կավելացնի գիտական արդյունքների առևտրայնացմանն ուղղված հետազոտությունների մասնաբաժինը, կնպաստի այդ արդյունքների ներդրմանը տնտեսության մեջ, հնարավորություն կտա զարգացնելու ինովացիոն տեխնոլոգիաների վրա հիմնված փոքր ու միջին ձեռնարկատիրությունը, կնպաստի նոր աշխատատեղերի ստեղծմանը: Ընդ որում, պետական բյուջեից և տնտեսության մասնավոր հատվածից գիտությանը հատկացվող ֆինանսավորման ծավալների մեծացումը պետք է նպատակաուղղված լինի 2020 թվականին եվրոպական միջին չափանիշներին մոտենալուն:

Լշենք, որ տնտեսական աճի նախադրյալների տեսանկյունից կարևորում ենք պետական քաղաքականության իրականացումը: Այս առումով ՀՀ կառավարության գործունեության 2019 թվականի ծրագրով տնտեսական զարգացմանն ուղղված հիմնական ուղեկիշները հետևյալն են՝

- Տնտեսական բնագավառում պետությունը պարտավոր է ստեղծել պայմաններ համախառն ազգային արդյունքի ձևավորման, տնտեսական գործունեության ոլորտում առավելագույն թվով մարդկանց ներգրավման համար:²¹⁷

- Տնտեսական, բիզնես դաշտը պետք է ձևավորվի ազատորեն՝ անաչառ մրցակցության, հովանավորչության բացառման պայմաններում: Սա նաև աղքատության հաղթահարման առանցքային պայման է. գործարար հմտություններ ունեցող յուրաքանչյուր ոք պետք է բիզնես արդյունք ստեղծելու, ինքն իր և շրջապատի բարեկեցությունն ապահովելու հնարավորություն ստանա հավասար, մրցակցային պայմաններում: Կարևոր է ձևավորել օրենսդրական ու գործնական միջանցք՝ Հայաստանում «գրոյից» տնտեսական գործունեության իրական հնարավորություններ ձևավորելու համար:

Տնտեսական քաղաքականության նպատակը պետք է դառնա աշխատատեղերի ստեղծումը, աշխատավարձերի բարձրացումը: Համապատասխանաբար, Կառավարության առաջիկա տնտեսական քաղաքականության հիմնական առանձնահատկությունը լինելու է ներառական տնտեսական աճի խթանումը:

Տնտեսությունը պետք է աճի բարձր տեմպերով, ծրագրային ժամանակահատվածում ՀՆԱ-ի աճի միջին տեմպը պետք է կազմի առնվազն 5 տոկոս: Միաժամանակ տնտեսական զարգացմանը պետք է մասնակցեն զգալիորեն ավելի մեծ թվով քաղաքացիներ, իսկ նրանց աշխատանքի շնորհիվ ստեղծվող տնտեսական

²¹⁷ ՀՀ Կառավարության 2019թ. փետրվարի 8-ի N65-Ա որոշում

արդյունքը պետք է բաշխվի առավել հավասարաչափ: Տնտեսության զարգացումը պետք է ստեղծի քաղաքացիներին արժանավայել աշխատանքով ապահովելու նոր հնարավորություններ: Որակապես նոր մրցունակ աշխատատեղերի ստեղծումը պետք է դառնա մասնավոր հատվածի գործարար ծրագրերին Կառավարության աջակցության հիմնական չափորոշիչներից մեկը: Զբաղվածությունը քաղաքացուն պետք է ապահովի արժանապատիվ եկամուտներով:

Տնտեսության Եական աճի ապահովման կարևորագույն գրավականն է տնտեսական մրցակցությունը և արհեստական մենաշնորհների բացառումը: Ըստ այդմ, Կառավարությունն ապահովելու է տնտեսական մրցակցության պաշտպանությունը՝ կարգավորիչ արդյունավետ մեխանիզմների գործարկման միջոցով:

Ապրանքների և ծառայությունների արտահանման զգալի աճը պետք է դառնա Հայաստանի տնտեսական առաջընթացի հիմնական շարժիչը: Ծրագրային ժամանակահատվածի ավարտին ապրանքների ու ծառայությունների արտահանումը 45 տոկոս ՅԱԿ-ի նկատմամբ պետք է հասնի 43-45 տոկոսի: Միաժամանակ արտահանման կառուցվածքում պետք է զգալիորեն աճի տեխնոլոգիատար ապրանքների դերը:

Ձեռնարկատիրական ակտիվներում մասնավոր ներդրումները կայուն զարգացման կարևոր նախաայման են: Արտադրության միջոցները պետք է շարունակաբար նորացվեն: Նշված գործընթացն անհրաժեշտ ծավալով սպասարկելու հարցում Եական նշանակություն կունենան ինչպես ներքին, այնպես էլ օտարերկրյա ներդրումները: Համապատասխանաբար պետք է զարգացվեն այնպիսի մեխանիզմներ, որոնք կխրախուսեն ներքին խնայողությունների ավելացումը և դրանց ներդրումների համար այլընտրանքային հնարավորությունների ստեղծումը: Հատուկ ուշադրություն կդարձվի օտարերկրյա ներդրումների պաշտպանության մեխանիզմների զարգացման հարցերին:

Կառավարությունը նպատակադրվել է Հայաստանը դարձնել բարձր տեխնոլոգիական, արդյունաբերական երկիր: Այս նպատակին հասնելու և բարձր տեխնոլոգիաների զարգացումն ապահովելու համար կիրականացվեն նպատակային քայլեր, մասնավորապես՝ ստեղծել ազգային վենչուրային ներդրումային հիմնադրամ, որն ի վիճակի կլինի Հայաստանում գործունեություն ծավալող ստարտափներում կատարելու անհրաժեշտ ներդրումներ՝ դրանց հետագա զարգացումն ու դեպի համաշխարհային շուկա ելքն ապահովելու նպատակով, դրամաշնորհային ծրագրերի միջոցով նպաստելու ստարտափերի ստեղծմանն ու զարգացմանը, ստեղծելու ձեռներեցության, գործարարական, վաճառքի և մարքեթինգի գիտելիքների զարգացման մեխանիզմներ՝ օգտագործելով միջազգային աթետերատորների հետ համագործակցելու հնարավորությունները, նպաստելու Հայաստանում աթետերատորների ստեղծմանն ու զարգացմանը և մշակելու համատեղ ծրագրեր՝ ստարտափների ինտենսիվ զարգացումն ապահովելու նպատակով և այլն:

Բարձր տեխնոլոգիական ընկերությունների զարգացման համար Կառավարությունը նախատեսում է՝

- Մշակել և իրագործել բարձր տեխնոլոգիական հայկական ապրանքների ու ծառայությունների՝ արտերկրում առաջխաղացման ու վաճառքի ծրագիր,
- Երևանում ու մարզերում ստեղծել ու զարգացնել տեխնոլոգիական կենտրոններ, ինչպես նաև ապահովել արդեն գոյություն ունեցող կենտրոնների արդյունավետ գործունեությունը՝ այդպիսով ստեղծելով բավարար տեխնոլոգիական և արտադրական հնարավորություններ՝ որպես պլատֆորմ հետագա զարգացման համար,
- Նոր տեխնոլոգիաների և գիտելիքի զարգացման, ինչպես նաև Հայաստանի՝ որպես տեխնոլոգիական կենտրոնի, վարկանիշի բարձրացման նպատակով ապահովել

պայմաններ և ձեռնարկել ակտիվ քայլեր՝ միջազգային բարձր տեխնոլոգիական կազմակերպություններին Հայաստանում ներգրավելու նպատակով,

➤ Նպաստել տեխնոլոգիական ընկերությունների և բուհերի արդյունավետ համագործակցությանը՝ կադրերի պատրաստման նպատակով:

Կարևորելով տնտեսական աճի ապահովման գործում օրենսդրական դաշտի ամրապայությունը՝ նշենք, որ դեռևս 2016թ.-ին ընդունվել է «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին օրենքը», որը սահմանում է ՀՀ պետական ինովացիոն քաղաքականության ձևավորման ու իրականացման իրավական ու տնտեսական հիմքերը, ինովացիոն գործունեությանը պետական աջակցության ձևերը:²¹⁸ Ինովացիոն գործունեությանն են վերաբերում գործունեության հետևյալ տեսակները՝

• Տնտեսական շրջանառության մեջ իրացվող, նոր կամ կատարելագործված տեխնոլոգիական գործընթացի, նոր կամ կատարելագործված արտադրանքի ստեղծմանն ուղղված գիտահետազոտական, փորձակոնստրուկտորական և տեխնոլոգիական աշխատանքների իրականացում,

• Մարքեթինգային հետազոտությունների իրականացում՝ ինովացիոն արտադրանքի իրացման շուկաների կազմակերպման նպատակով,

• Նոր կամ կատարելագործված ծառայության կամ արտադրանքի ստեղծման նպատակով տեխնոլոգիական վերազինման իրականացում և արտադրության նախապատրաստում,

• Նոր տեխնոլոգիական գործընթացների, արտադրանքի և ապրանքների փորձարկման, ստանդարտացման ու հավաստագրման իրականացում,

• Տեխնոլոգիաների փոխանցում,

• Նոր կամ կատարելագործված տեխնոլոգիայի կիրառման սկզբնական ժամանակահատվածում մինչև ինովացիոն նախագծի հետզնման նորմատիվային ժամկետի լրանալը նոր կամ կատարելագործված արդյունքի, նմուշի արտադրություն,

• Ինովացիոն ենթակառուցվածքի ստեղծում և զարգացում,

• Մտավոր սեփականության օբյեկտների, գաղտնի գիտական, գիտատեխնիկական և տեխնոլոգիական տեղեկատվության նկատմամբ իրավունքների ձեռքբերում և փոխանցում, ինովացիոն ծրագրերում ու նախագծերում ներդրումների իրականացում:

Պետական ինովացիոն քաղաքականության նպատակն է ինովացիոն գործունեության համար տնտեսական, իրավական ու կազմակերպական պայմանների ապահովումը: Պետական ինովացիոն քաղաքականության ինդիկատորն են՝

• Պետական ինովացիոն քաղաքականության գերակայությունների սահմանումը,

• Տնտեսության տեխնոլոգիական վերազինմանը և ինովացիոն ենթակառուցվածքների ստեղծմանն ու զարգացմանը նպաստելը,

• Ինովացիոն գործունեության ոլորտում գիտության, կրթության, արտադրության և ֆինանսավարկային կառույցների համագործակցության իրավական հիմքերի ստեղծումը:

Պետական ինովացիոն քաղաքականությունը մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ Ինովացիոն գործունեությանն աջակցության տարեկան ծրագրով (այսուհետ՝ ծրագիր): Ծրագրի իրականացման ֆինանսավորումն արտացոլվում է պետական բյուջեում առանձին տողով: Ծրագիրը ներառում է միջոցառումներ հետևյալ ուղղություններով՝

²¹⁸ Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին 2016թ. N 30-63-Ն օրենք

- ✓ Ինովացիոն ենթակառուցվածքների ստեղծում և զարգացում,
- ✓ Ինովացիոն նախագծերի իրականացում,
- ✓ Կադրերի պատրաստում և վերապատրաստում,
- ✓ Տեխնոլոգիաների փոխանցում և առևտրայնացում,
- ✓ Միջազգային ստանդարտների ներդրում:

Ծրագիրն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Ծրագրի կառավարման հաշվետվությունը ներկայացվում է տվյալ տարվա պետական բյուջեի կատարման մասին հաշվետվության հետ: Ծրագրում ընդգրկվելու նպատակով ներկայացված ինովացիոն նախագծերի մրցույթների անցկացման և ֆինանսավորման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ լիազոր մարմնի ներկայացմամբ: Ինովացիոն գործունեության ֆինանսավորումը կամ համաֆինանսավորումը կարող են իրականացվել հետևյալ աղբյուրներից՝ պետական բյուջեից, ինովացիոն գործունեության սուբյեկտների միջոցներից, այդ թվում՝ այլ աղբյուրներից ստացվող միջոցներից, տեղական, օտարերկրյա ներդրողների և միջազգային ֆինանսական կազմակերպությունների ու հիմնադրամների միջոցներից, վենչուրային հիմնադրամներից:

OPPORTUNITIES FOR IMPROVING THE RA NATIONAL INNOVATION SYSTEM AS A SOURCE OF LONG-TERM ECONOMIC GROWTH

HOVIK GRIGORYAN

*Lecturer at the Department of Finance of the
Armenian State University of Economics, PhD in Economics, Associate Professor,
Yerevan, Republic of Armenia*

The aim of this article is to propound and substantiate the approach according to which the national innovation system of the Republic of Armenia provides wide opportunities for our state in the context of ensuring economic growth, where the Republic of Armenia, having huge intellectual resources, can use them most effectively in the creation and application of innovative technologies.

Both sociological (analysis, synthesis) and special (formal-logical, comparative-legal) methods were used for the implementation of the research.

Studying the results of our research we concluded that the Republic of Armenia should primarily take into account the knowledge-based opportunities for ensuring long-term economic growth, since the knowledge is the source for the overrun of supreme values, in the result of which our country's transition to a knowledge-based society implies a radical transformation in political, economic and educational sectors.

Keywords: *economy, economic growth, knowledge, innovation system, innovations, GDP, state budget.*

ВОЗМОЖНОСТИ СОВЕРШЕНСТВОВАНИЯ ИННОВАЦИОННОЙ СИСТЕМЫ РА КАК ИСТОЧНИК ОБЕСПЕЧЕНИЯ ДОЛГОСРОЧНОГО ЭКОНОМИЧЕСКОГО РОСТА

ОВИК ГРИГОРЯН

*Преподаватель кафедры финансов Армянского государственного экономического университета, кандидат экономических наук, доцент,
г. Ереван, Республика Армения*

Целью данной статьи является предложение и обоснование подхода, по которому национальная инновационная система РА предоставляет широкие возможности для государства в контексте обеспечения экономического роста, где РА, имея большие интеллектуальные ресурсы, может наиболее эффективно использовать их в создании и применении инновационных технологий.

В ходе исследования использовались как исследовательские (анализ, синтез), так и специальные (формально-логический, сравнительно-правовой) методы.

В результате исследования мы пришли к выводу, что для обеспечения долгосрочного экономического роста Республика Армения должна опираться именно на знания, поскольку само знание является источником перепроизводства самого ценного. Переход общества нашей республики в общество, основанное на знании, предполагает радикальную трансформацию в политических, экономических и образовательных сферах.

Ключевые слова: экономика, экономический рост, знание, инновационная система, инновации, ВВП, государственный бюджет.